

ԴԱԻԻԹ ԲԷԿ

ԿԱՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՑ

«ԺԸ. դարու առաջին կեսը երեք մեծ ամուսններ կը լեցնեն հայ կեանքը: Իսրայել Օրի, Դաւիթ Բէկ եւ Մխիթար: Առնցմէ առաջինը՝ քաղաքական գետնի վրայ կը գործէր, Հայոց հայրենիքը ազատագրելու համար. երկրորդը՝ գիւղատնտեսական գետնի վրայ կը պայքարէր, ձեռք բերելու համար քաղաքացիական պայքարը: Իսկ Մխիթար ընտրած էր մշակոյթի դաշտը, մոյմ մպատակներուն հասնելու համար»:

Գ. ՄԻԽԻԹ-ԱՐԵՆԱՆ («Գեղունի», Վենետիկ 1950, էջ 44)

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

1972 թուականին, Դաւիթ Բէկի պատերազմներու 250ամեակին առիթով (1722-1972), «Բազմավէպ» հրատարակեց սոյն խորագրով հատալից ուսումնասիրութիւն մը, մեր աշխատակից Մեծարդոյ Հ. Սամուէլ Վրդ. Արամեանի ստորագրութեամբ¹, ուր հանգամանօրէն կը ներկայացուէին այդ մեծ դէպքին պատմական զոյգ աղբիւրները, պահուած՝ Ս. Ղազարու Մատենադարանի երկու հիմնական ձեռագիրներուն մէջ (թիւ 2685 եւ թիւ 620):

Դաւիթ Բէկի զօրավարներէն՝ Ստեփան Շահումեան, Տէր Աւետիք քահանայ եւ ուրիշներ, հերոսական դէպքէն քիչ տարիներ ետք՝ Վենետիկէն անցնելով, իրենց յիշողութեան մէջ անջնջելիօրէն տպաւորուած եղելութիւնները սիրայօժար աւանդած էին Մխիթար Աբրահամ հայրենասէր աշակերտներուն, որոնց շարքին՝ յատկապէս ե-

1. Տես «Բազմավէպ» ձև. (1972), Թ. 2-3, էջ 232-259: Ուսումնասիրութեան միւս մասերը տես դարձեալ «Բազմավէպ» ձև. (1975), Թ. 1-2, էջ 82-106. Թ. 3-4, էջ 324-347 (ԺԸ. եւ ԺԷ. դարերու հայ ազատագրական շարժումը): Յաջորդաբար տես նաեւ «Բազմավէպ» ձև. (1976), Թ. 1-2, էջ 86-107 (Մխիթարեան վարդապետներու մամուլներ՝ որոնց մէջ յիշատակուած է Դաւիթ Բէկի պատերազմներու մասին):

րիտասարդ պատմաբան եւ աշխարհագէտ Հ. Ղուկաս Սեբաստացիին (1709-1752)²:

1730ական թուականներու այդ շրջանին, Մխիթարեան նորահաս տառ Միաբանութեան կեդրոնին մէջ՝ Ս. Ղազար, անխնջ Հիմնադրին իսկ ջանքերով, մշակութային տենդագին ու խանդավառ աշխատանք մըն էր ծայր տուած, ի սպաս հայկական վերածնունդին եւ լուսաւորութեան:

Վենետիկի խաղաղ ամիսներուն, երիտասարդ վանականները գրի կ'առնէին իսկոյն, կարօտակէզ յուզումով, Հայոց լեռներուն վրայ մղուող ազատագրական պայքարի նահատակներուն սիրագործութիւնները, պատմուած՝ անոնց իսկ մարտակից հերոսներու բերաններէն: Այդպէս կը ձեւանար սեւագրութեան փոքրիկ տետրակ մը, զոր Մեծ. Հ. Սամուէլ Վրդ. Արամեան կը կոչէ Ա. օրինակ:

Յաջորդաբար, նոյն ինքն Հ. Ղուկաս Վրդ. Սեբաստացի Ստեփանեան, վերոյիշեալ ականատես զօրավարներէն թելադրուած դաշնադան պատմները համագրելով՝ միաձոյլ եւ համահաւաք պատում մի մէջ, 1736/37ի ատենները, վերականուցած է Դաւիթ Բէկի պատերազմներուն ամբողջական պատմութիւնը, որու ձեռագիրը անցած է Մխիթարեան Մատենադարան, ստանալով թիւ 620 համարը, զոր Մեծ. Հ. Սամուէլ Վրդ. Արամեան կը կոչէ Բ. օրինակ, երբեմն այլ կերպով ալ յիշատակուած ուրիշներէ³:

Այս երկրորդ ձեռագրէն է որ յետոյ լիովին օգտուած է Հ. Միքայէլ Զամչեան⁴. ասկէ է որ կատարուած են ընդօրինակութիւններ ալ, հաւանաբար Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի այժմեան թիւ 3297, 4598 եւ 6835 ձեռագրերը⁵, աղբիւր դառնալով յաջորդաբար Գուլամիրեանցի հրատարակութեան⁶:

2. Հ. ՍԱՀԱԿ ԶԵՄԻՍԵԱՆ, Հ. Ղուկաս Սեբաստացի (1709-1752) հեղինակ Դաւիթ Բէկի պատմութեան («Բազմավէպ» ձև. (1972), Թ. 4, էջ 491-501):
3. Հ. ԵՂԻԱ ՓԵՉԻԿԵԱՆ, «Դաւիթ Բէկ»ի պատմական աղբիւրները եւ Մխիթարեան («Բազմավէպ» ՂԶ. (1938), Թ. 6-9, էջ 172-187):
4. Պատմութիւն Հայոց, հտ. Գ, տպ. Վենետիկ 1786, տպ. Յովհ. Փապեանց, Գիրք 2. գլուխ խը. եւ խթ. էջ 784-800:
5. Յուսէպ Զեռագրաց Մաշտոցի ամուսն Մատենադարանի, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. հտ. Ա. 1965, սիւն 983, 1243, հտ. Բ. 1970, սիւն 404:
6. Դաւիթ Բէկ (Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկի, եւ պատերազմաց Հայոցն իսկանու...): Հրատ. ԱՐԳԱՐ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ. Վաղարշապատ 1871, տպ. Ս. ԿԹԶ. Էջմիածնի, էջ ԺԶ, 1-78: Նկատմամբ պատմութեան հեղինակին, որ է Հ. Ղուկաս Սեբաստացի, տես Ն. ԱՂՈՆԸԻ յօդուածը, «Դաւիթ Բէկ» վէպի պատմական հիմքը եւ գաղափարախօսական արժէքը, (Բաժնի, կեանք, գրականութիւնը, յիշողութիւններ, լոյս ընծայուած Զննդեան հարկաւորմեակին առիթով, Կազմակերպիչ Յանձնաժողովի կողմէ, մասնակցութեամբ հեղինակուող աշխատակիցներու, Փարիզ, 1937, տպ. Խ. Մաթիկեան, էջ 122-148):

Դժբախտաբար, սակայն, Դաւիթ Բէկի պատմութեան վերեւ յիշատակուած՝ հնագոյն եւ առաջին օրինակը, սեւագրութեան այն փոքրիկ տետրակը, շուրջ երկու դար անյայտ մնացած է, ծածկուելով՝ Հ. Ղուկաս Սեբաստացիի անձնական ձեռագիրը հեղինակութիւններուն հետ՝ Ս. Ղազարու Մայր-դիւանին մէջ: 1928ի ատեններն է որ դիւանէն հանուելով՝ կը մտնէ ձեռագրատուն, ուր նախ կը զետեղուի իր ազգական՝ Թիւ 620 ձեռագրին քովիկը, իբր նոյն ձեռագրի երկրորդ հատորիկ, ապա կ'անցնի «Խմբագիր Ե» կոչուած անկազմ տետրակներու շարքին (իւր դեղնագոյն շապիկով, Ե. Ե. 70 թուահամարով), եւ հուսկ վերջերս՝ 1974ին, Ս. Ղազարու նորակերտ ձեռագրատան կառուցման եւ ձեռագիրներու փոխադրութեան, վերատեսուի եւ դասաւորման նոր ձեռնարկի ընթացքին՝ ստացած է առանձին կազմ ու 2685 թուահամարը:

Մեծ. Հ. Սամուէլ Վրդ. Արամեան խորապէս ուսումնասիրելով սոյն փոքրիկ՝ բայց թանկարժէք ձեռագիրը (Թիւ 2685), հիմնուելով բնագրային ու պատմական ապացոյցներու վրայ, որոշակի կը փաստէ որ անոր առաջին մասը (Թղ. 1ա-8բ) պատմողաբար թելադրուած է Դաւիթ Բէկի զօրավարներէն՝ Ստեփան Շահումեանի կողմէ, մինչդեռ երկրորդ մասը (Թղ. 9ա-17ա) թելադրուած է Տէր Աւետիք քահանայէն: Այսպէս կը բացատրուին ու կը լուսարանուին այն կրկնութիւնները եւ մանրամասնութեանց տարբերակները, ինչպէս նաեւ կարգ մը մուտք մնացող հարցեր, որոնք ի յայտ կու գային՝ բաղդատելով երկու մասերը:

Այժմ ահա, իբր առաջին անգամ լոյս կը տեսնէ Դաւիթ Բէկի պատմութեան այդ սկզբնաղբիւրը, իր հարազատ ձեւով ու զոյգ պատումներով, ըստ Ս. Ղազարու Մխիթարեան Մատենադարանի Թիւ 2685 փոքրիկ ձեռագրին, պահելով մինչեւ իսկ աշխարհագրական տեղանուններու եւ անձնանուններու բնագրային ձեւերը՝ իրենց զանազանակներով:

Յաջորդաբար պիտի հրատարակուի նաեւ Թիւ 620 ձեռագրին բընագիրը, ցարդ ծանօթ Գուլամիւրեանցի 1871 թուականի հրատարակութենէն միայն, յարակից փարեւոր ծանօթագրութիւններով ու պատշաճ ցանկերով: Մեծ. Հ. Սամուէլ Վրդ. Արամեան պատրաստած է նաեւ այս երկրորդ բնագրին աշխարհաբար թարգմանութիւնը:

Աշխատութիւնը՝ ձօնուած Դաւիթ Բէկի յայտնութեան 250ամեակին (1722-1972), լոյս կը տեսնէ այժմ՝ Մխիթար Սեբաստացիի ծննդեան 300ամեակին նուիրուած սոյն բացառիկին մէջ, միացնելով երկու յորեկանները՝ Դաւիթ Բէկի եւ Մխիթար Աբբահօր, որոնք հայրենիքի եւ կրօնքի երկու լուսաշող դէմքերն են, մեր արդի պատմութեան երկունքի շրջանին, ԺԸ. դարու սեմին:

ԽՄԲ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՑ

Ա. ՕՐԻՆԱԿ

(Մտնդրմ. Ս. Ղազարու, Ձեռագիր քիւ 2685)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Պատում Ստեփան Շահումեանի)

1ա

Թիւ ՈՐՊԵՍ Ի ՎՏԱՐԻԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՊԱՐՍԻՑ

ՀԱՅՔՆ ԽԱՓԱՆՈՒ Ի ԿՈՒԻ ԵԼԻՆ

Ձկնի խմբելոյն Աղուանից ի վերայ Պարսից շահ Հուսէինին եւ սատակելոյ զնա, եւ զաթոռ թագաւորութեանն յափըտակելոյ, որ եղեւ 1170 թուականին Հայոց [= 1721], ի Ժամանակի յորժամ Լակզի թաթարքն ի յերկիրն Պարսից ի կողմանս Հայոց եւ Աղուանից արշաւեցին եւ զգիւղօրէսն Գանջու եւ Շամախու ասպատակեալ յաւար առին, որք եւ զԱղուլեցին ի Մասուրէկեան տոհմէ զիշխանն Շամախու սպանին, եւ զամենայն զօրաւոր դիմակեացն սատակեցին, եւ զժողովուրդս երկրին եւ զկանայս եւ զմանկունս դերի վարեցին: Չորոց մի ըստ միոջէ այժմ յայսմիկ վայրի չունիմք պատմել: Եւ կամ թէ զիա՛րդ զայսչափ չարիս տեսեալ Հայոց Դուզախ դաւառի, ընդդէմ ելին նոցա ի բաց վանել, գունդ կազմեցին, զգէն զգեցան, պատրաստեցան ի պատերազմ, ճակատեցան առ Թարթար գետոյն՝ ընդդէմ ամենայն յարձակելոցն յասպատակութիւն երկրին իւրեանց. այսինքն՝ թէ՛ Լէկզի թաթարին եւ թէ՛ Պարսից: Չայսոսիկ զամենեւեան յայսմ վայրի ոչ ունիմք գրել. այլ միայն զխմբելոյն Հայոց յեթնաբերդ դաւառին խափանու եղելոց ձեռնարկանեմք պատմել:

Յամին 1171 հայկազեանս թուականի [= 1722], յորժամ լուան բնակիչք հօթնաբերդեան դաւառին խափանու զասպատակն եւ զաւերումն Գանջու եւ Շամախու, Հայք եւ Պարսիկ առ հասարակ խռովեցան եւ զահի հարեալ սասանեալ | տադ-

1բ

նապէին, եւ իբրեւ ամիսս երկուս եւ երկու՝ առ միմեանս երթեակէս առնել ի միմեանց կասկածէին: Քանզի զանձինս իւրեանց առ հասարակ ի խնամոց ընդհանրական ընտանի խնամակալութեան բոլորովիմբ լքեալս եւ լուծեալս տեսանէին, եւ վասն այսորիկ քաղաք ի քաղաքէ, աղդ յաղդէ եւ իշխան յիշխանէ զկասկածանս թշնամութեան կրեալ տաղնապէին, որպէս եւ գրեալ է՝ թէ «Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թաղաւոր Իսրայելի², եւ այր իւրաքանչիւր զհաճոյս աչաց իւրոց առնէր»: Սոյնպիսի աղէտս չարեաց եւ սոքա կրէին:

Ի սոյն աւուրս զառնութեան սասանութեան, Ստեփանոս անուամբ ոմն ի կողմանցն Կալերու վանքեցի, ի Հայոց աղդէ, խորհուրդ ի մտի դնէր անցանել ի Սիւնեաց զաւառն եւ գնալ հասանիլ յաշխարհն³ Վրաց ի Մցխիթ քաղաք, առ Շահնաւուղ իշխանն Վրաց, եւ խնդրել ի նմանէ զայր մի տալ խափանու ի զօրադուլս, եւ հրաման տալ նմա զօրաժողով լինելոյ, եւ զերկիրն ի⁴ թշնամեաց պահպանելոյ. զի զայս ոչ ոք ի սոսկակաւնացն իւրովի առնել համարձակէր. եւ եթէ առնիցէր ոք, իբրեւ ապստամբեալ ի տէրութենէ՝ ի բաց մերժիւր ի ժողովրդենէն: Այլ իշխանն Վրաց մեծ էր, եւ զայսպիսի զօրադուլս յայնմ գաւառի կացուցանել նմա անկ էր: Իսկ արդ՝ թէ որով մարթասցի զհայցուածն իւր առաջի իշխանին արժանաւոր ցուցանել, խորհեցաւ սուտ գիրս յանուն յիսուն արանց տանուտերանց խափանու յօրինել եւ ըստ նմանութեան իւրաքանչիւր կնքոց նոցա զկնիքսն քանդակել, եւ զայն գիրն նոքօք կնքեալ հաստատել: Եւ զօրութիւն բանից հայցուածոց հրովարտակին | այսպիսի ինչ էր. Տո՛ւր մեզ զայր մի՝ լինիլ զօրադուլս, որպէս զի քոյին հրամանաւ լիցի մեզ այս օրինաւոր, եւ մեք զզօրսն հոգամք պատրաստել, եւ նոքօք զգաւառն մեր ի թշնամեաց աներկեւան առնել: Եւ զնաց Ստեփանոս եւ եհաս ի Մցխիթ քաղաք, յանդիման եղեւ իշխանին Վրաց, եւ գոյթ⁵ տուեալ նմա յաղաղս նախաշխատակեալ քաղաքացն՝ պատմեաց նմա զամենայն վրտանգս եւ զխռովութիւնն, եւ զահն եւ զերկիւղ ժողովրդեանն խափանու, եւ մատոյց նմա զհրովարտակն զոր արարեալ էր յանուն տանուտերանցն: Հաճոյ թուեցաւ իշխանին հայցուածն իւր, զոր յանուն նոցա հայցէր:

1. Ձեռ. ամիսս ք եւ գ:

2. Ձեռ. Իլի: Իսկ Աստուածաշունչն մէջբերութիւնը տե՛ս Դատ. ԻԱ. 24:

3. Ձեռ. յ~ն:

4. Ձեռ. չունի ի:

5. Ձեռ. զուծ:

Եւ ետ զԴաւութ Պէկն, որ ի յաղդէն Հայոց, երկու հազար արամբ, եւ զիշխանութիւն ետ նմա զզօրս գումարել եւ պահել զերկիրն խափանու:

Եւ ել նա յերեսաց իշխանին Վրաց եւ զնաց ժողովեաց իւր զօրս երկու հազար սպառազինաց եւ զքսան հարիւրապետս (որոց անուանքն են այսոքիկ. Ալթանդել, Կեօրկի, Կեօրկի փոքր կոչեցեալ, Մատուր, Ղարակեօզ, Թաթոս, Եղիազար, Յարութիւն, եւայլն, եւ Ստեփանոս ընդ նոսա)⁶, եւ եկն եմուտ նոքօք ի գաւառն Սիւնեաց: Աղդ եղեւ գաւառապետին Նախիջեւանու՝ եթէ Դաւութ Պէկն երթայ ի խափան, զօրաժողով լինիլ անդ: Եւ նա երկոտասան հազարաւ ի վերայ Դաւութ Պէկին: Իսկ նա իբրեւ լուաւ զայս, հրաման ետ զօրս ժողովել ի տանէն Սիսանայ, եւ ժողովեալ խմբեցին զչորս հազարս արանց, եւ զառաջին երկու հազարսն յաւելեալ ի նոսա՝ եղեն վեց հազար վառեալք ի պատերազմ, | եւ նոքօք հանդերձ ճակատեցաւ ի վերայ Նախիջեւանու գետոյն՝ ընդդէմ խանին: Արդ՝ իբրեւ բախեցան՝ ընդ միմեանս, զօրքն խանին ի փախուստ դարձան, եւ սոքա զկնի նոցա պնդեալ⁸ փախստեայս տանէին ի 18 ժամէ աւուրն մինչեւ ց21 ժամն վանեցին: Եւ ի 22 ժամուն փախստեայքն ամենեքեան ի միասին հաւաքեցան ի կրունկս ընդդէմ Հայոցն դարձան: Իսկ Հայքն փախստեայք եղեն ի նոցանէ մինչեւ ի գետափն. 2200 մարդ գետակուր եղեն. իսկ Դաւութ Պէկն, Ալթանտէլն, եւ երկօքեան Կօրկիքն ամրացան ի վէժ մի յափն գետոյն, եւ անտի մինչեւ ց2 ժամ զիշերոյն հասին ի Սիսան, եւ ամենայն գերծեալքն ի փախստէից ժողովեցան ի վերայ Դաւութ Պէկին: Եւ անտի եկին յերկիրն Տաթեւ, եւ զզօրսն ժողովեալ առ ինքն՝ նստաւ ի Վանս:

Եւ իբրեւ լուան բնակիչքն Չաւնդրու զգալն Դաւութ⁹ Պէկին՝ զիմեցին առ նա, եւ զառաջինն դիմեաց Թորոսն¹⁰, որ բնակէր ի խորճոր, գալ եւ առնուլ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան. եւ գնացեալ ի Չաւնդուր՝ ժողովեաց զարսն տեղւոյն առ ինքն. մնաց անդ:

Յետ այսորիկ աւուրքն աւուրք դարնանային, եւ եկն հօտ մի ոչխարաց Սուլտանին, յորում էին 2000 ոչխար եւ 12 հովիւ,

6. Ձեռ. փակագիրներ:

7. Ձեռ. բաղխեցամ:

8. Ձեռ. պնտեալ:

9. Այս եւ յաջորդ հինգ տողերը աւելի ուշ գրուած, տարբեր գրով, յետոյ առանձին թուղթով փակցուած են բնագրին մէջ: Այդ պատճառով թերեւս գրուած է Դաւիթ եւ ոչ թէ Տաւութ, կամ Դորոս՝ փոխան Թորոսի:

10. Ձեռ. Դորոս:

արածիլ ի յարտորայս նոցա. եւ զայս իբրեւ լուաւ Թորոս հարիւրապետն՝ վաղվաղակի առաքեաց զարս, եւ կոտորեցին զհոփիւսն եւ առին զամենայն հօտն: Արդ՝ զայս իբրեւ լուաւ Պարկուչատու Փաթալի Սուլտանն եւ իւր եղբայրն Աղասի Սուլտանն, թէ Հայքն Չաւոնդուրեան ապստամբեալ են ի Թուրքաց եւ կոտորեալք են զնոսա, գրեաց վաղվաղակի ի Լեւազ Մանաճիր օղլի Սափի Ղուլոյն այսպէս, թէ այս ինչ օր՝ երկոտասան հազարաւ ելանեմ ես ի վերայ Հայոց, դու եւս առ ընդ քեզ զամենայն զօրս Տաճկաց որք են ի Կենաուզն, եւ դու այդի եւ ես աստի ելցուք ի վերայ Հայոց եւ ջնջեցուք զնոսա ի միջոյ: Այլ Սափի Ղուլին ոչ էառ յանձն. եւ ել Փաթալի խանն երկոտասան հազարաւ ի վերայ Չաւոնդուրին. իսկ նոքա առաքեցին յառաջագոյն ի Կամնադուրոյ ի յիշկերտոյ 150 սպառազէն, կալնուլ զկիրճս ճանապարհին, զի էր անտառախիտ յոյժ, եւ դարան մտին նոցա անդ: Արդ՝ զօրքն Թուրքաց իբրեւ հասին անդը, զօրքն Հայոց արձակեցին ի վերայ նոցա զհրացանս՝ մինչեւ ի դարձուցանել զնոսա ի կրուսկս. եւ իբրեւ դարձան նոքա, սոքա պնդեցան¹¹ զկնի եւ կոտորեցին ի նոցանէ չորս հազար այր, եւ մնացեալքն փախեան ի Պարկուչատ: Բայց հետեւեալ աւուրն, ել Լեւազ Սափի Ղուլին 300 սպառազէն արամբ, եւ եկն նենգութեամբ ի յԱփկու վանքն, եւ գրեաց Իքաց իշխանացն՝ զի եւ նոքա եկեցեան, որպէս զի զՄանլեւ եւ զամենայն գիւղորայս Հայոց, որք են անդ, աւերեցեան. եւ ոչ կամեցաւ Միրզասայիլն: Այլ զայս ամենայն իմացեալ արքն Մանլեւու, առաքեցին արս ի Չաւոնդուրն եւ ասեն՝ թէ ել Սափի Ղուլին եւ զայս ինչ եւ զայս ինչ խորհեցաւ առնել:

Յայնժամ ել անտի | Թորոս Պէկն՝ հինգ հարիւր արամբ՝ ի գիշերի, եւ ի յառաւօտուն պահու յերեքտասաներորդ ժամու եհաս ի յԱփկիս. եւ զայն տեսեալ Սափի Ղուլոյն՝ փախեաւ ի նմանէ, եւ նա պնդեցաւ¹² զկնի նոցա եւ եհար ի նոցանէ 80 այր. եւ ի ժամանակին յայնմիկ սոքա հարին կոտորեցին զերիս գիւղս Թուրքաց եւ առին զամենայն ինչս նոցա եւ դարձան ի Մանլեւ: Արդ՝ իբրեւ լուր եղեւ բանս այս ի Գիս, ժողովեցան ամենայն արք տեղոյն այնորիկ ի միասին եւ եկին արտաքս. եւ էջ առ նոսա Թորոսն ի գլխոյ Մանլեւին, եւ հարեալ ի դիմի՝ կոտորեաց ի նոցանէ զբազումս, եւ այլքն փախեան ի Գիս. եւ նոքա զամենայն զկին եւ զորդիս իւրեանց հաւաքեալ էին ի վերայ բարձրագոյն ինչ գաղաթան մերձ ի շէնն. հրամայեաց Թո-

11. Ձեռ. պնտեցան:

12. Ձեռ. պնտեցաւ:

րոս զօրացն ոչ պնդիլ¹³ զկնի նոցա, այլ երթալ հարկանել զքաղաքս նոցա, եւ առնուլ յաւարի զամենայն ստացուածս նոցա, եւ զտունս նոցա այրել. եւ իբրեւ կատարեցին՝ դարձան անդրէն ի Մանլեւ, եւ երեք օր հանգեան անդ: Եւ կոչեալ առ ինքն զՊապ Կալերեցի՝ զորդին Սրապիոնի, կացոյց զնա կառավար ի վերայ երկրին Կենայուղոյ, եւ ինքն դարձաւ ի Չաւոնդուրն: Իսկ Պապայ գնացեալ անդ՝ զօրաժողով եղեւ, եւ եկն ի Կալերս: Բայց վերոյ ասացեալ Սափի Ղուլին ի Լեւազու ձորն, որքան Թուրքի դիւղորայք գոյին, առեալ փախեաւ ի յՈւրդուվար, եւ մնաց միայն չորս գիւղ Թուրքաց. եւ զերիս գիւղսն՝ այսինքն Դամալի, Շրդի եւ Պիրենայ, ի յԱրձաւաքարէն, հրամանաւ Պապայ զօրապետին հաւաքեցին ի Կալերն, եւ զնոսա ի մեծէն մինչեւ ի փոքր կոտորեցին, եւ զբոլոր ինչս նոցա առին եւ մնաց մի միայն թաղ՝ յորում էր 60 տուն. նոքա աղաղակ բարձին առ սոսա՝ թէ մեք հնազանդիմք ձեզ. եւ խնայեցին ի նոսա:

4ա

Յետ այսորիկ իբրեւ երկու ամիս ի վերայ անցին, ել Սափի Ղուլին 500 արամբ ի յՈւրդուվարէն, եւ գիշերայն եկն ի Սալիպուն եւ եհար զերկուս գիւղս Հայոց, զարսն կոտորեաց եւ զկին եւ զորդիս նոցա վարեաց ի գերութիւն, եւ զինչս նոցա: Չայս իբրեւ լուաւ Դաւութ Պէկն, կոչեաց զմի ոմն ի հարիւրապետացն՝ որոյ անունն էր Մխիթար, եւ առաքեաց զնա եւ զզօրս նորա ի վերայ նոյն մնացեալ 60 տանն Թուրքաց. եւ նոքա եկեալ զամենեսեան զնոսա ի տունս իւրեանց իբրեւ զոչխար մորթեցին, եւ առին զինչս նոցա. եւ անտի գնացին ի յանապատն Հալի ձորոյ, եւ տեսին զի այն պարսպեալ էր եւ ամուրս պատն Հալի ձորոյ, եւ Պապայ հազարապետին գնալ ի ձորն կանգնեալ. հրամայեաց եւ Պապայ հազարապետին գնալ ի ձորն Լեւազու, զի որքան Թուրք իցեն մնացեալ անդը՝ կոտորեցեն, եւ Պապ հազարապետն, 1500 այր ընդ նմա, եւ եկին ի Լեւազու ձորն եւ ոչ զոք գտին անդը ի Թուրքաց, զի սակաւ ոմանք մնացեալ էին, եւ նոքա եւս փախուցեալ անկան ի յՈւրդուվարն: Իսկ Պապ քննեաց եւ եգիտ անդ զբազում ինչս եւ զստացուածս, եւ առաքեաց զայնս ի Չուվարու եկեղեցին, եւ կացոյց անդ պահապանս, եւ ինքն փաղաց զնաց ի Վայրիվարու գիւղորայսն Հայոց եւ թէ՛ ի սոցանէ եւ թէ՛ ի Լեւազու զբազում ինչս եհան. եւ ի նոսա եգիտ գերիս¹⁴ տունս Թուրքացեալս, եւ կոտորեաց զնոսա, եւ էառ զինչս նոցա եւ առաքեաց զնոսա ի Չուվար, եւ այլ ոչ եւս մնաց Թուրք ի խափան: Բայց միայն

4բ

13. Ձեռ. ոչ պնդիլ:

14. Ձեռ. գ3:

ի կողմանս ՓռլիտլուրուԹա սարին ժողովեցան Թուրքն ի Ձեռու բերդն, որոց դլուխն էր Ասլամազ Պէկն¹⁵: Ձայս իբրեւ լուաւ ՏաւուԹ Պէկն, գրեաց ի Հալուձորոյ առ Թորոս Հազարապետն եւ առ Պապ Հազարապետն, զի եւ նոքա ելցեն անտի զօրօք իւր-եանց ի վերայ Հէնիցն Թուրքաց, եւ ինքն եւս եհաս ի վերայ նոցա յայնմ կողմանէ. մարտ եղին ընդ նոսա, Հարին սատա-կեցին զնոսա մինչեւ ց23 ժամ աւուրն, եւ ոչ մի ոք զերծաւ ի նոցանէ: Եւ անտի իբրեւ եկին ի Ղարաչիմէն, Թորոս Պէկն ել ընդդէմ ՏաւուԹ Պէկին, եւ ասէ՝ զքեզ ոչ խնդրեմ, այլ զեր-կիրն իմ ես պահպանեմ, եւ անտի դարձաւ ի Չավունդուրն, ԴաւուԹն գնաց ի բերդ իւր, եւ Պապ՝ ի Կենալուզն:

Արդ յետ այսց բանիցս, Թորոս ժողովեաց յիւր երկրէն վեց հազար զօրս՝ առ ի գնալ ի վերայ Ուրդուլարայ։ Յայնժամ Մելիք¹⁶ Ֆռանկուլն ի Եռցիվանակու գրեաց առ Թորոս նենդու-
թեամբ այսպէս, թէ փաթալու Սուլտանն լուեալ է թէ դու ե-
լանելոց ես ի վերայ Ուրդուլարին, ինքն եւս զօրս կազմեալ է
եւ պատրաստեալ, զի յորժամ դու ելանիցես այդի, նա մտեալ
յերկիրն քոյ՝ աւերեսցէ։ Ուստի յոյժ բարեռք առնես, եթէ յա-
ռաջ եկեսցես ի վերայ Պարկուշաթայ, զի եւ ի մեր Պարկու-
շաթայ Հայոցն քեզ բազում օգնութիւնս | առնեմք։ Իսկ նա Հա-
ւատաց, եւ ել միամտութեամբ եւ գնաց մինչեւ Նղայ հորթ,
որ է ի սահմանս Պարկուշաթայ, ինքն եւ վեց հազար զօրք ընդ
նմա։ Եւ եկն Ֆրանկուլն եւ երկու հազար զօրք ընդ նմա, եւ
եկաց ի մի կողմն զօրացն Թորոսին։ Եւ եւ փաթալու Սուլթանն,
ինքն եւ եղբայրն իւր Աղասի Սուլթանն եւ տասնեւուրցն հա-
զար զօրք ընդ նմա, եւ եկաց դէմ յանդիման զօրացն Թորոսին.
սոքա մարտ եղին ընդ նոսա եւ հարին խորտակեցին զճակատն
Թուրքաց. եւ իբրեւ տանէին զնոսա փախստականս առաջի իւր-
եանց, Փռանկուլն զարս արձակեաց զկնի Սուլտանին եւ ասէ.
Զի՞նչ գործէք, զիա՞րդ փախչիք, դարձարուք ի կրունկս, զի
ես ընդ ձեզ եմ. դուք ի յառաջոյ եւ մեք զկնի սոցա խորտա-
կեսցուք զսոսա։ Եւ արարին այնպէս. եւ կոտորեցին զզօրսն
Թորոսի, եւ զԹորոս սպանին, եւ ի վեց հազարացն՝ միայն հա-
զար չորս հարիւր մարդ գերծաւ, եւ այլքն մեռան, եւ փախըս-
տականքն եկին ի Զապունդուրն։

Իսկ Փաթալու Սուլտանն կամեցաւ գալ մտանել ի Զաւլունդուր երկիրն, եւ աւերել զայն: Բայց Նուպար զօրապետն նըստաւ յերկիրն Թորոսի, եւ առաքեաց առ Պապ զօրապետն զարս

15. Զեռ. Պեկին:

16. 26. Մեղիք:

5ր
 եւ ասէ՛. Դու ինքնին գիտես զի ահա կորեաւ զօրքն մեր, եւ արդ յարուցեալ զայ ի վերայ մեր Փաթալու Սուլտան, մեզ յօգնութիւն Հասիք: Եւ նա առաքեաց առ նոսա երկու հազար զօրս ի Զալունդուրն՝ յօգնութիւն Նուպարին: Իսկ Փաթալու Սուլտանն իբրեւ լուաւ թէ յօգնականս ետուն Նուպարին ի Կենաուզայ, դարձաւ յետս: Արդ ի զօրացն Պապայ որք եկին ի Զալունդուրն՝ երկու զօրապետք ապստամբեցան ի Պապայ, եւ եկեալ ի Լիչքին՝ զօրաժողով եղեն եւ կամեցան ունիլ զՊապ. եւ նա փախեաւ անտի, եւ ասեն՝ մեք կառավարեմք զերկիրն. զայս իբրեւ լուաւ Տաւութ Պէկն՝ առաքեաց առ նոսա զԿօրկի զօրապետն 200ով եւ հաշտեցոյց զնոսա, եւ վերստին կացոյց զՊապ ի վերայ նոցա, եւ զվերոյ յիշեալ Լեւազու առեալ աւարսն բաժանեցին ի մէջ իւրեանց:

Արդ՝ յետ այսորիկ իբրեւ մի կամ երկու ամիս ի վերայ անցին, եկն լուր առ Պապ ի յՈւրդուաւարայ, Թէ Թուրքն վերջատին զօրաժողով եղեւ առ ի դալ աւերել զՊապիան: Յայնժամ խորհուրդ արարին ծերքն Կենաուզայ՝ զի մարդիքն գիւղօրէից բոլոր հաւաքիցեն ի երկու գիւղս¹⁷, ի Կեսն վանք կոչեցեալ շինէն մինչեւ ի Կալբր, եւ ի կողմանցն Կալբուռ մինչեւ ի Մանլեւ եւ մինչեւ ցԱիքլիս: Եւ իբրեւ ժողովեցին զամենեւեան զնոսա անդ, ի հետեւեալ առուրն տեսին զի Սափի Ղուլին եւ որդին Ղազու Ուրդուվարեցւոյ եւ որդին Շահխալամին եւ ութ հազար զօրք¹⁸ ընդ նոսա անցեալս առ նոսա ի յԱլանկեզայ սարոյն եւ եկեալս ի վէմն Պուղայ: Արդ՝ իբրեւ լուաւ Պապ զանցանելն նոցա, եւ ընդ առաջ նոցա երկու հազարաւ, եւ ետես ընդ այն՝ զի զօրքն Թշնամեաց բազումք են յոյժ, դարձաւ յետս. իսկ ժողովուրդդ գիւղորդէիցն¹⁹ որք հաւաքեալք էին ի վերոյ ասացեալ տեղւոջ, ամենեքեան անցին ի սարոյն խաչպուլու ի հողն Չավունդուրին, եւ այլազգիքն յառաջ խաղացեալ եկին մինչեւ ի Դաշալտուն եւ զբոլոր գիւղորայսն²⁰ քանդեցին:

Իսկ Տառութ Պէկն իբրեւ լուաւ այնպիսաբարն դաւն այլ-
ազգեաց, եւ երկու հազար եւ ութ հարիւր արամբ, եւ էջ ի
դաշտ անդր, եւ զայն լուեալ այլազգեացն՝ փախեան ի յովր-
դու վար: Այլ Տառութ Պէկն իբրեւ լուաւ՝ թէ Պապ սակաւ ո-
մամբ է կացեալ, բարկացաւ յոյժ ի վերայ նորա եւ ասէ. Միթէ
չիցէ՞ բաւական զի փախեաւ ի պատեհազմէ, եւ արդ ոչ եւս

17. Ձեռ. է 2 գիւղս:

18. *Qbn.* p hmqur qorf:

19. Ձեռ. գիւղօրէիցն:

20. Զեռ. գուգորայսմ:

կամի զալ առ իս: Եւ ել անտի Տաւութ Պէկն եւ եկն ի Կալերս, եւ կալեալ անդ զՊապ՝ տարաւ ընդ ինքեան, եւ անցեալ ընդ Խաչապուռ սարոյն՝ եկն յԻշկետ, եւ անդ զլիսատեաց զնա, եւ զտուն նորա աւար էառ եւ երեք օր²¹ նստաւ յԻշկետ, եւ յետ երկից աւուրց զնաց ի Գեմանցու դաշտն:

Եւ այլազգիքն իբրեւ լուան թէ Տաւութ Պէկն անցաւ ի Չափունդուրն, եւ Սափի Ղուլին եւ որդին Ղազու եւ որդին Շահալամին երկոտասան հազարաւ, եւ անցին յԱլանկեղայ սարոյն ի Կենէնդն եւ զբոլոր գիւղորայսն այրեցին եւ լուր էհաս Տաւութ Պէկին վասն այսր ամենայնի ի Չաւուրդուրն, զի յաւուրսն յայնոսիկ բնակէր նա ի Ծափն. եւ ել չորս հազարաւ ի վերայ այլազգեացն, եւ եգիտ զնոսա ի Լիւքին ուր է յայնկոյս Ղօղզօզ գետոյն: Իսկ Թուրքն բնակեալ էր ի Լիւքին. իբրեւ տեսին զսոսա՝ ելին արտաքս եւ եկին ի Գողթ, ուր է գետափն...²² եւ ոչ ետուն անցանել զգետն. եւ սոքա աստի եւ նոքա անտի մարտ եղեալ կռուէին յառաւօտէ մինչեւ ի 24 ժամ աւուրն, մինչեւ ի դաշն նոցա ի Զիպանդ ի զլուխն դաշտուն: Եւ ի գիւղերի Տաւութ Պէկն էանց ի Հալի ձորն: Եւ ի յառաւօտուն պահու, նոքա | իբրեւ տեսին թէ Տաւութ Պէկն ոչ է անդ, եւ ոչ ուստէք էր նոցա այնուհետեւ երկիւղ. անցին ի Գուրամ, եւ եկին աւար հարկանելով²³ զկողմանս Գուրամու՝ մինչեւ ի Մեղրայ: Արդ՝ մինչեւ եկեալ էր նոցա ի Մեղրայ, մեղրացիքն վասն զի լուեալ էին զգալ նոցա ութուտասն²⁴ հազարաւ, ժողովեցան արք քաղաքին յերիս թաղս: Իսկ զօր այլազգեացն դիմեաց դառաջինն մտանել ի փոքրիկ թաղն, եւ սոքա ի վեր առին զկամուրճն, կալան զանցս գետոյն զինուր եւ թուփանկովք, եւ նոքա լքան անցանել զգետն: Եւ յայնմ վայրի ուրք մնացին ի փոքրիկ թաղն՝ լուրս առաքեցին արանցն Գուրհամոյ...²⁵ Այլազգիքն զիմեցին ի մեր փոքր թաղն. ուստի մինչեւ ցերկու օր եթէ յօգնութիւն մեզ ոչ հասանիցիք՝ զերիմք ի նոցանէ: Եւ Ստեփաննոս Վարթանէս Շահումբանէս ի գիւղերայն ելեալ զնացի ի Չափունդուր առ զօրապետն Պայինտուր, եւ յայտ արարի նմա զամենայն նեղութիւնս եւ զանձկութիւնս²⁶ Մեղրացւոց, եւ նա առժամայն հրաման տայր վաղվաղակի դալ ժողովիլ առ նա ամենայն զօրականացն. եւ եկին խմբեցան 2000 քաջ սպառազէն

21. Զեռ. 3 օր:

22. Զեռագրին մէջ՝ մէկ բառի տեղ պարապ թողուած է:

23. Զեռ. հակամեղով:

24. Զեռ. ժլ:

25. Զեռագրին մէջ՝ երկու բառի տեղ պարապ թողուած է:

26. Զեռ. զանցկուրիւնս:

ի Չափունդուր եւ ի Գուրհամայ, եւ ել նոքօք եւ զնաց բանակեցաւ այն գիւղեր ի Մաղրան աւանն, եւ Ստեփանն ընդ նմա. եւ մերձ յառաւօտուն պահու՝ ելին կաղմեցան եւ անցին զնացին ի կողմանցն Ափիկու, եւ հասին ի Մեղրի: Իսկ զօրքն Թուրքաց ի բանակէ անտի իբրեւ զբաղմութիւն զօրացն Հայոց տեսանէին՝ ոչ հաւատային թէ յօգնութիւն իցեն նոցա հասեալ յայլ ուստեքէ: Այլ ասէին թէ Մեղրացիքն | կանանց իւրեանց զղեցուցեալք են զդեստ առնացի եւ զարդ պատերազմի. եւ տուեալ զբաղում սուտ դրօշակս ի ձեռս նոցա, առ ի երկեցուցանել զմեզ:

Արդ մինչ չեւ էին հասեալ օգնականքն Հայոց ի Մեղրի, քաջ եւ արի սպառազէնքն Մեղրացւոց դործ քաջութեան ի նմին գիւղերի դործեցին, զի անցեալ յայնկոյս գետոյն յեղակարծումն ժամու՝ ի մէջ բանակի թշնամեացն, յարձակեցան եւ զբաղումս ի նոցանէ ի սուր սուսերի սատակեցին, մինչեւ եւ զօրդին Շահալամին երկու հազարաւ ի փախուստ արկին ի յուրդուար քաղաք. այլ զի սակաւք էին՝ ոչ կարացին ի սպառ ջնջել եւ անհետս առնել զնոսա անտի. դարձան անդրէն ի Մեղրի:

Իսկ օգնականքն Հայոց իբրեւ դային ի մեծ թաղն Մեղրու հասանէին, Մեղրացիքն վաղվաղակի նոցա զկերակուր պատրաստէին: Յայնժամ արդելու զնոսա Պայինտուրն, ուր էր իշխան եւ զօրազուլս ամենայն զօրուն եկելոյ ընդ նմա, եւ ասէ. քաւ լիցի մեզ ուստել, մինչ չեւ իցեմք վանեալք ողորմութեամբն Աստուծոյ զթշնամիսն մեր: Զի խորհուրդ եւ ջան էր նորա դործ պատերազմի փութով վճարել. վասն զի միով աւուրք յառաջ քան զայն, այլազգիքն գրեալք էին յայնկոյս գետոյն Երասխայ զօրականացն Թուրքաց՝ դալ օգնութիւն հասանել նոցա. եւ նոքա ի պատրաստի էին բազում զնդաւ դալ հասանիլ ի թիկունս նոցա: Ուստի վաղվաղակի հանդէս առնէր ամենայն զօրուն եկելոյ ընդ նմա եւ ուրք ի յամրի անդ էին, եւ կարգէր կաղմէր, եւ զնոսա յերիս գունդս բաժանէր, | առ յիւրաքանչիւր գումդ 860 սպառազէն վառեալ: Ապա ի վեշտասաներորդ ժամու աւուրն՝ մի գունդն խրախոյս բարձեալ մղիլ սկսաւ ի մէջ զօրացն Թուրքաց, յաջ եւ ահեակ կոտորելով. եւ այլ երկու գունդքն յաջմէ եւ ահեկէ²⁷ զօրաց թշնամեաց՝ ձայն տուեալ զաղաղակ բարձին, ի վերայ յարձակեցան, եւ ի 16 ժամէ աւուրն մինչեւ ց23 ժամն ի մէջ առին զբաղմութիւն զօրացն անօրինաց, եւ հարին կոտորեցին ի նոցանէ աւելի քան զմետասան հազար այր. ի սոցանէն անկան յերեւելի անձանց Լէվազեցի Մուրում Գալանթարն եւ այլք բազումք, եւ մնացեալքն մաղապուրծ անկան

27. Զեռ. ահեկէ:

ի յՈրդովար քաղաք: Եւ ձերբակալ արարին զՈւրդուարեցի Հա-
ճի Շափին, որ էր այր երեւելի ի մէջ ամենեցուն նոցա, եւ ա-
ռին զամենայն զկաճ զկարասի բանակի նոցա, զղէն զսուր եւ
զամենայն գործիս պատերազմին, եւ զամենայն զառ եւ զաւար
նոցա: Եւ եղեւ ուրախութիւն մեծ ամենայն բնակչացն իւ-
փանու:

Իսկ զՀաճի Շափին՝ զոր ըմբռնեցին, կամէր Պայինտուրն
զօրագլուխն ածել զնա առ Դաւիթ. բայց իշխանք Մեղրացեայ
աղաչեցին զնա թողուլ զՀաճին անդ առ նոսա. եւ նա չնորհեաց
նոցա: Եւ եղին զնա ի պաճեստի ի տան տեառն Ներսիսի: Եւ
զօրականքն ամենեքեան զնացին իւրաքանչիւրքն ի տունս իւր-
եանց, եւ շինականքն Գուրհամայ դարձան զնացին եւ բնակե-
ցան իւրաքանչիւր ի տունս իւրեանց, որք վասն ահի հէնիցն
անցեալք էին յերկիրն Չալնուր, որպէս ի վերոյ ասացաք:

Յետ այսորիկ իբրեւ մի ամ ի վերայ անցանէր, եղբայրն
Նրվանու խանին բազում զօրօք կուտէր առ ի զնալ յօգնութիւն
եղբօրն իւրոյ, որ պաշարեցեալ էր ի յԵրեւան քաղաքի ի դօ-
րացն | Օսմանցւոց. արդ՝ սա իբրեւ բազում զօրօք ի յՈւրդովար
քաղաք դայր հասանէր, ամենայն մահմետականքն²⁸ քաղաքին
յառաջ մատուցեալ բողոք բարձին²⁹ զհայոցն Մեղրեայ, եւ ա-
սեն. Դատ արա ընդ մեզ եւ ընդ նոսա, զի նոքա կոտորեցին
կորուսին զամենայն այր քաղաքիս: Եւ նա առաքեաց զԾառայսն
իւր ի Մեղրի՝ կոչել առ ինքն զոմանս ի գլխաւոր իշխանացն,
առ ի գիտել զպատճառն այնպիսւոյ աղմկին. իսկ իշխանքն
Մեղրեայ իբրեւ զայն լսէին, տաքնապէին վարանէին ի միտս
իւրեանց: Ի միտսին զայն ժողովէին խորհուրդ խորհէին եւ
ասէին. զի՞նչ արասցուք, զի թէ երթայցեմք՝ մեծ վտանգ է
մեզ, եւ թէ ոչ երթայցեմք՝ վիշտ վտանգի է մեզ եւ ժողովըր-
դեանս. վերջապէս վասն հասարակի օգտի հաճեցան ոմանք ի
ծերոցն զվտանգ մահու յանձն առնուլ, եւ երթալ առ խանն:
Եւ իբր մտին սոքա ընդ ծառայսն խանին ի յՈւրդովար, քա-
ղաքացիքն առ հափարակ դիմեցին ի վերայ նոցա՝ սպանանել
զնոսա. բայց ծառայքն խանին ոչ ետուն թոյլ, մինչեւ ածին
կացուցին զնոսա առաջի խանին, եւ քաղաքացիքն զհետ նոցա
երթային մինչեւ ի դուռն խանին. եւ իբրեւ յանդիման եղեն
նմա, սկսան քաղաքացիքն աղաղակել վերստին եւ ասեն. Դատ
արա ընդ մեզ եւ ընդ Մեղրացիսն, զի կորուսին սպառեցին զմեզ:
Եւ ի հարցանելն խանին զՄեղրացիսն, պատասխանի առնէին

28. Ձեռ. մահմետականքն:

29. Ձեռ. բարցիմ:

ՏՐ

նմա՝ թէ մեք զոչ ոք ի դոցանէ ի զուր տարապարտուց սպա-
նաք, եւ ոչ ումեք մեղաք, այլ դոքա բազում զօրս կուտեցին
եւ զբազում գիւղորէս³⁰ մեր կոտորեցին կործանեցին եւ ի գերի
վարեցին. ապա ի զուր տարապարտուց եկին³¹ պաշարեցին զմեզ
եւ կամեցան բնաջինջ առնել զմեզ, եւ մեք առ ի պաշտպանել
զմեզ՝ ընդդէմ դարձաք դոցա եւ ի բաց վանեցաք. եւ արդ՝
հարց ցղոսա թէ զի՞նչ մեղաք, զո՞ սպանաք, ո՞ւմ ընդդէմ դար-
ձաք արքունեաց, զի դոքա եկին պաշարեցին զմեզ եւ կամեցան
ջնջել զմեզ: Յայնժամ ասէ խանն ցՈւրդովարեցիսն. Ո՞վ հրա-
մայեաց ձեզ ելանել ի վերայ նոցա առ ի կողոպտել եւ կորու-
սանել զնոսա: Եւ նոքա ատիբերան³² եղեն եւ ոչ կարացին տալ
առ այն պատասխանի: Ապա ասէ ցնոսա խանն. Ո՞վ եղեւ ձեզ
առիթ եւ առաջնորդ ելանելոյ ի վերայ նոցա: Եւ նոքա ասեն
Սափի Ղուլին Լվաղեցի՝ որդին Մանիչարի, եւ որդին Ղազու
Ուրդովարեցի, եւ որդին Շահ Իսլամին: Եւ կալեալ խանին զՍա-
փի Ղուլին, խրատեաց զնա խստագոյն գանիւք, եւ էառ ի նո-
ցանէ զտուգան, եւ զՄեղրացիսն արձակեաց խաղաղութեամբ ի
տեղիս իւրեանց, եւ ինքն չուեաց գնաց անտի:

Ապա այնուհետեւ սկսան Ուրդովարեցիքն առնել զհաշտու-
թիւն ընդ Մեղրեցիսն եւ խնդրեցին արձակել նոցա զՀաճի Շա-
փին, եւ նոքա եւս խնդրեցին ի նոցանէ արձակել զգերիսն, զորս
ի գիւղորէին³³ ըմբռնեցին, եւ յանձն առին արձակել զնոսա:
Եայնժամ գրեցին Մեղրացիքն առ զօրագլուխն Ազուլեցւոց,
որպէս զի ընկալցին ի յՈւրդովարեցւոցն զԵօթանասուն անձինս
Հայոց գերեցեալս ի նոցանէ, եւ³⁴ ազդ արասցեն ինքեանց թէ
ընկալան զնոսա, որպէս զի եւ ինքեանք արձակեսցեն զՀաճի
Շափին, եւ արարին այնպէս. եւ սոքա արձակեցին զՇափին,
եւ եղեւ այնուհետեւ խաղաղութիւն ի մէջ նոցա:

30. Ձեռ. գիւղորէս:

31. Ձեռ. եկի:

32. Ձեռ. արիբերան:

33. Ձեռ. գիւղորէն:

34. Ձեռ. եւ եւ (կրկնուած):

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Պատում Տէր Աւետիք Բախանայի)

9ա

Ա.— Արդ՝ եկեալ Դաւիթ Պէկին ի Սափան 412 արամբ բանակեցաւ ի տեղին որ կոչի Իջդէփէ, եւ անդ մարտեաւ զառաջինն ընդ Ղարաչօռլու կոչեցեալ Թուրքաց, եւ յաղթեաց նոցա: Եւ ապա եկեալ բնակեցաւ ի յամուրն որ կոչի Շնհեր, եւ կոչեաց առ ինքն զառաջնորդն Տաթեու՝ զԿիրակոս վարդապետն, եւ զԳրբրիէլ վարդապետն, եւ ժողովեաց ի վերայ իւր զարսն տեղւոյն, եւ ասէ՝ թէ եկեալ եմ աստ առ ի բառնալ զԹուրքն ի միջոյ. եւ զնացեալ եհար զգիւղորէսն՝ Թուրքաց, եւ բերեալ զինչս եւ զստացուած նոցա՝ եկեր:

Բ.— Եւ զայն տեսեալ երեսուններկու ձիւանչիրն կոչեցեալ ցեղն Թուրքաց, եկին միաբան ի միասին ի Շնհեր՝ ի վերայ Դաւիթ Պէկին: Իսկ նորա եւս ժողովեալ առ ինքն զարսն Շընհերու, եւ ընդ առաջ նոցա ի յԻջդէփէ, եւ անտի ետես զգորս թշնամեացն իբրեւ զվեշտասան հազարս, եւ ընդ ինքեան առեալ զարս սպառազէնս 400, յուսացեալ յԱստուած՝ զոչեցին առ նա, եւ հարեալ ի դիմի նոցա յաւուրս երիս՝ խորտակեցին զնոսա, եւ առին զամենայն ինչ նոցա, զգէն եւ զերկվարս նոցա: Յետ այսորիկ առաքեաց նա զՄիխիթար զօրապետն իւր ի շէնսն որ կոչիւր Գուրդլար. եւ եկեալ նորա եհար կոտորեաց զամենայն բնակիչս նորա զայլազգիս, եւ էառ զամենայն ինչս նոցա եւ զարծաւ:

9բ

Գ.— Ընդ այնու ժամանակաւ էր ոմն Մելիք Տաթեու ուրացող, որ յառաջն կոչիւր Դաւիթ, յետոյ ուրացեալ զԳրիստոս հանդերձ տամբն իւրով՝ կոչեցաւ Պաղեր, եւ որդիք նորա ամենեքեան եղեն Շահ | Ղուլի: Սա ժողովեալ զարսն Տաթեու առ ինքն եւ կանգնեալ անդ ամուրս, խորհէր տալ պատերազմ ընդ Դաւիթ Պէկին: Իսկ նորա լուեալ զայն ամենայն, եւ վաղվաղակի ի վերայ նորա ի պատերազմ, եւ պաշարեալ զամուրս նորա՝ յետ երկուց աւուրց էառ զայն, եւ կալեալ զնա էած ի Շնհեր, եւ զամենայն ստացուածս նորա: Եւ հրամայեաց նմա զաւուրս երկոտասան, ի մէջ եկեղեցւոյն, յանդիման ամենեւոյն, ասել այսպէս բարձր ձայնիւ թէ՝ Լոյսն Լուսաւորչի հա-

1. Զեռ. զգիւղորէսն:

ւատոյն, վա՛յ ուրացողին. եւ ապա եհատ զգլուխ նորա: Եւ ինքն եկեալ նստաւ ի Տաթեւ:

Դ.— Արդ՝ զայս ամենայն իմացեալ ամենեքեան որք բնակեալ էին ի Չաւնդուրն, զառաջինն եկն առ նա Թորոս զօրապետն, եւ ընդ նմա հնգետասան այր: Եւ ետ նմա զիշխանութիւն զօրապետութեան եւ առաքեաց զնա, եւ ընդ նմա զՊայնտուր սպարապետն ի Չաւնդուր: Յետ այսորիկ դիմեցին առ նա զորք իւրեանց որդիքն Մաղայ Մելիքին Ջուղայու, որ եւ կոչի չին Ջուղայ՝ ի Գողթան գաւառի, եւ որդիքն Տիւքնչի մականուանելոյն, եւ սոքա ամենեքեան զայլն խառնէին եւ յաւելանային ընդ զօրսն Դաւիթ Պէկին, իբր երկուս հազարս արանց զօրաւորաց: Գրեաց Դաւիթ պէկին նաեւ առ Մելիք Փարսաղան եւ առ փեսայ նորա տէր Աւետիսն՝ գալ ի յօգնութիւն ինքեան: Վասն զի զայն ամենայն լուեալ եւ տեսեալ Պարսիցն, որք շուրջ էին զնոքօք կուսակալք նաեւ կուսակալն Սափանու, Սանն Պարկուշատու՝ որ կոչի Բաթալի Սան, եւ Սանն Ղարադուղ երկրին. սոքա | ամենեքեան եկեալ ի միասին, ելին ի վերայ Չաւնդուր գաւառին՝ ութ եւ տասն հազարաւ, յաւուր քառասորդաց պահոց՝ ի տօնի սրբոյ Լուսաւորչին:

10ա

Ե.— Իսկ Հայոցն յուսալով յողորմութիւնն Աստուծոյ ի դիւերի յարութեանն Գրիստոսի դիմեալ ի վերայ բանակի նոցա՝ հարին կոտորեցին զնոսա, եւ առին զբանակն, եւ զայլսն փախըստականս արարին: Յետ այսորիկ եկին մելիք Փարսաղան, եւ տէր Աւետն ի յողմոյն Դաւիթ Պէկին: Իսկ նորա բարկացեալ ի վերայ նոցա, եւ ասէր՝ ընդէ՞ր ոչ ելիք յօգնութիւն մեզ, եւ հրամայեաց տանիլ զնոսա ի Շնհեր, եւ անդ արկանել զնոսա ի բանտ, եւ էին նոքա զաւուրս հնգետասան ի բանտի անդ:

Զ.— Եւ դէպ եղեւ յաւուրսն յայնոսիկ, Յօհաննէս (պետն Գուգարացւոց)² գալ ի կողմանս յայնոսիկ՝ յիսուն եւ վեց հազար հայազունդ զօրօք, պաշարել զանմատչելի բերդն Որոտնայ. եւ ի չկարել առնուլ զայն ի Թուրքաց, զայ ի Շնհեր եւ գտանէ անդ զտէր Աւետն եւ զաներ նորա ի կալանս. ազատէ զնոսա եւ առաքէ Դաւիթ Պէկին ի Հալիճոր: Եւ ինքն եկեալ ի Տաթեւ՝ առնուլ զբանակն Դաւիթ Պէկին եւ դառնայ ի տեղի իւր: Իսկ Դաւիթ Պէկին ընկալեալ զՄելիք Փարսաղան՝ կացոյց զնա յիւրում կարգի զօրապետ ի վերայ երկու հարիւր վաթսուն եւ վեց զօ-

2. Զեռագրին մէջ երկու բառի տեղ պարապ թողուած է, Յօհաննէս անունէն ետք. մատիտով յետոյ մէկը լրացուցած է, գրելով պետն Գուգարացւոց. գիրը Հ. Նղիա Վրդ. Փէլիկեանինն է: Հմմտ. Գուլամփրեանցի հրատարակութեան մէջ (Դաւիթ Բեգ, Վաղարշապատ 1871, էջ 10, թիւ 28):

10բ րաց: Եւ զտէր Աւետն ի վերայ չորեքհարիւր քառասնից: Եւ զնոսա եւ զամենայն զօրս իւր կուտեալ՝ եւ զնաց նա ի Ղարա-
չիմէն եւ բանակեցաւ անդ, եւ անտի հրեշտակս արձակեաց ի
Զաւնդուր, ի Մեղրի եւ ի Կենաուղ, զալ | Ժողովիւ առ նա, եւ
եկին հասին զօրապետքն յամենայն կողմանց:

Եւ իայց Թորոս սպարապետն ընդդէմ եկաց նմա ի կռիւս.
եւ միջնորդ մտեալ ի մէջ երկուցն՝ հաշտեցուցին զնոսա: Եւ
Ժողովեալ զնոսա անտի՝ եւ զնաց նա ի վերայ Ասլամազ Ղու-
լին, եւ մատուցեալ պաշարեաց զամուրս նորա, եւ դժուարա-
ցաւ առնուլ զնա, զի էր բարձրաբերձ եւ անառիկ յոյժ: Եւ յետ
երկուց աւուրց բախելոյն³ զայն, դիմեալ ի վերայ Մխիթար
սպարապետն եւ տէր Աւետիսն, մօտեցան ի պարիսպ անդ: Իսկ
նոքա քարածիզ եղեալ ի վերուստ անտի մերժեցին զՄխիթարն.
բայց տէր Աւետիսն խաբանօք ելեալ ի բերդն՝ կալաւ զոստի-
կանն. եւ յայսմիկ նուազի ի չորս կողմանց զեղանիլ սկսան
զօրքն Հայոց, եւ հարին կոտորեցին զզօրս ամբողջն, եւ ի նմին
աւուր մեռան ի Թուրքաց չորս հազար. իսկ ի Հայոց՝ սակաւ
ոմանք: Եւ անտի զնաց ի Սիսան գաւառ, եւ անդ կալեալ կո-
տորեաց զիշխանս Թուրքաց: Եւ եկեալ պաշարեաց զմեծագոյն
եւ զանառիկ բերդն Որոտնու, եւ էառ զայն յետ չորից աւուրց,
ի տօնի ծաղկազարդին:

11ա Ըւ եւ եղեւ յետ այնորիկ առաքել զբազմութիւն զօրաց
իւրոց ի վերայ Պարկուշատու, եւ ինքն մնաց սակաւուք ի Սի-
սան գաւառի: Եւ ել ի վերայ նորա Խանն Նախիջեւանու⁴ չո-
րեքտասան հազարաւ ի պատերազմ, եւ անկան ի նմին պատե-
րազմի ի Հայոցն իննհարիւր այր: Եւ անտի եկն Դաւիթ Պէկն
ի Հալիճոր, եւ Ժողովեալ զարսն տեղոյն՝ զնաց ի Շիշկետ, եւ
անդ ի չարախօսելն զՊապայ զօրապետին՝ եհատ զգլուխ նորա:
Եւ անտի զնաց ի Զաւնդուր, անդ եւս զօրաժողով լեալ, եւ ա-
ռեալ ընդ իւր զզօրսն՝ զնաց ի վերայ Թուրքին, եւ հարին կո-
տորեցին Շահայպակու զիւղորէսն⁵, եւ զինչս նոցա առեալ՝
եկին ի դաշտն Կուլմանու:

Թւ եւ այլր եկն առ նա, եւ ասէ. Ահա Թուրքն Խախանու,
Ուրդուարու, Թաւրիզու եւ Ղարատաղու քսան եւ ութն հազա-
րաւ դիմեալ զան կամ ի Մեղրի եւ կամ ի Կենաուղն: Իսկ նորա
լուեալ զայն՝ վազվազակի Ժողովեաց զամենայն զօրս իւր եւ

3. Ձեռ. բաղխելոյն:

4. Ձեռ. Նախիջեւանու:

5. Ձեռ. գիւղորէսն:

11բ եկեալ բանակեցաւ ի Կալեր. եւ ընդ այդն ընդ առաւօտն եհաս
ի Լճկին, եւ սկսաւ պատերազմն. եւ իբր էանց օրն՝ Թողեալ
անդ զԹուրքն՝ եկն ի Փուխուրութայ սարն, եւ անտի ի Հալի-
ճոր: Յայնժամ սկսաւ Թուրքն հարկանել զգիւղորայսն⁶, կո-
տորել եւ ի գերի վարել, մինչեւ ի գալ նորա, եւ պաշարել
զՄեղրի. եւ յետ հինգ աւուր պաշարմանն՝ առին զփոքրիկ
թաղն: Յայնժամ հրեշտակս արձակեցին ի Կալեր, զօրապետացն,
զալ օգնութիւն հասանիլ ինքեանց: Եւ ել զնաց զիշխանս Ստե-
փաննոս Շահում Զատայն ի Զաւնդուր, եւ Ժողովեալ անտի զա-
մենայն զօրս տեղեացն՝ յառաւօտուն պահու հասին արանցն
Մեղրու, եւ հարին կոտորեցին զամենայն զբանակն Թուրքաց,
եւ թափեցին ի նոցանէ զամենայն գերեալսն, եւ կալան զգլու-
խաւորն նոցա. եւ առին զբոլոր բանակ եւ աւար բազում յոյժ:
Զայս մեծ բարութիւնս արար Ստեփաննոս Վարդանէս Շահում-
բանէս, որոյ զփոխարէնն հատուցէ նմա Աստուած: Ուստի եւ
Դաւիթ Պէկն ըստ արժանեացն փառաւորեաց զնա, տալով նմա
զերկիր | եւ զիշխանութիւն երկից Մելիքաց⁷, որպէս զի նա մի-
այն իշխեսցէ եւ դատեսցէ զնոսա:

Արդ իբրեւ զայս ամենայն յաջողեաց նոցա Աստուած, կո-
չեալ Դաւիթ զզօրազլուխսն իւր՝ առաքեաց զնոսա ի Ղազան-
կուլու սարն, ի վերայ Թուրքմանաց. եւ զնացեալ անդ զիշե-
րայն՝ անկան ի վերայ ամենայն բնակչաց երկրին, եւ կոտոր-
եալք զնոսա՝ առին զամենայն ինչ նոցա, վեց հազար երեքհա-
նոցա: Եւ մինչդեռ զհետ մտանէին փախստէիցն՝ պատահեցաւ
միայնակ Մխիթար հազարապետն առաջի թշնամեացն, առ որ
քարածիզ լեալ՝ կալան. իսկ նա աղաղակել սկսաւ՝ թէ Թուրքն
տանին զիս: Եւ իսկոյն աճապարեալ տէր Աւետիսն՝ թափեաց ի
ձեռաց նոցա: Եւ առեալ զամենայն զառ եւ զաւար՝ դարձան ի
Հալիճոր առ Դաւիթ, որոյ տեսեալ զայն ամենայն՝ ուրախ ե-
ղեւ յոյժ: Եւ յետ տասն աւուր՝ դարձեալ առաքեաց զզօրսն ի
լերինս Կասպելու, ի վերայ Թուրքմանին, որք զնացեալ հա-
րին եւ զնոսա անդ, եւ առին զինչս նոցա եւ զանասուն 900, եւ
դարձան ի Հալիճոր: Եւ յետ վեց աւուր՝ առաքեաց զնոսա ի
վերայ բնակչաց գաւառին Պարկուշատու: Բայց զի Մխիթար
հազարապետն խռովեալ էր ընդ տեսուն իւրոյ, իբրեւ զնացեալ
զօրքն հարին զբնակիչս երկրին, եւ ել Բաթալի Խանն ընդդէմ
նոցա, Մխիթարն փախեաւ: Իսկ Խանն կրճատեալ կոտորեաց ի

6. Ձեռ. գգիւղորայսն:

7. Ձեռ. մելիքաց:

13բ սակաւութիւնը յաղթել բազմաց, ապա ո՛րչափ եւս բարեպաշտ քրիստոնէից, որք հաւատով դիմեն առ նա:

Արդ՝ իբրեւ ետես Դաւիթ թէ Աստուած օգնական է իւր, խնդրէր այնուհետեւ տալ պատերազմ ընդ Օսմանցոց, եւ առաքեաց առ Խանն Տուզալի Քեզում զՄխիթար հազարապետն եւ զտէր Աւետիսն՝ վաթսուոն եւ վեց արամբ, եւ ասէ. Ե՛կ միաբանեալ տացուք պատերազմ ընդ Օսմանցոց: Եւ եկեալ դտին զԽանն ի շէնն Քուրդաշեան, եւ պատմեցին նմա զբանն. բայց նա երկեալ առնել զայն. իսկ եղբայր նորա Խանն Լեքազում ջանայր հաւանեցուցանել, եւ մինչդեռ ընդ այս վիճէին, զօրքն Օսմանցոց եկեալ լցին զբաշտն Կեչեւիանու: Եւ ասեն Մխիթարն եւ տէր Աւետն ցլխանն. Դիմեսցուք ի վերայ նոցա: Բայց նա երկեալ, եւ ոչ կամեցաւ զալ. յայնժամ սոքա վաթսուոն եւ վեց արամբն սակաւ ինչ պատահեալ նոցա՝ անցին գնացին, եւ զօրքն Օսմանցոց մտին ի Մեղրի, քսան եւ երկու հազար վառեալք: Եւ իբրեւ ընդ երեկս եղեւ՝ Մխիթարն եւ տէր Աւետն չորս արամբ եկին ի յայգեստանս Մեղրու եւ ժողովեցին զամենայն փախստեալսն Մեղրացոց անդէն. Խանն¹³ եւս առաքեաց յիսուոն վառեալ, եւ զիւրեանց զօրսն եւս եղին ի դարանի ի գլուխն Մեղրայ, եւ ինքեանք սակաւութիւն զիշերի մտին ի Մեղրի. եւ զօրացն պատուէր տուեալ էր նոցա, զի ընդ լուսանալն՝ դիմեսցեն ի քաղաք անդը, եւ իբրեւ առաւօտ եղեւ, իւրեանց զօրքն ոչ հասին, բայց Օսմանցոցն իմացեալ զայն ամենայն, հեծան պատրաստեցան, եւ սկսան մեկնել ի քաղաքէն. եւ Մխիթարն, տէր Աւետն, եւ որք ընդ նոսա՝ սկսան ի ներքս հարկանել զվերաւորս ի յՕսմանցոց, եւ հարին սատակեցին զհարկահանն: Եւ յայսմ վայրի որ ի ներքս, որ արտաքս ի դարանին, հասանէին հարկանէին զՏաճիկսն եւ վանէին: Բայց զի զօրքն Հայոց, որոց սպասէին, ոչ ժամանեցին, ասեն ցլխանն. Ե՛կ ընդ մեզ, գնացեալ առցուք ի յՈւզունպատ զանցս նոցա: Ի յայն բան հասին զօրքն Օսմանցոց, եւ Խանն փախեալ, եւ սոքա կալան զանցս Օսմանցոց, եւ նոքա նեղեալ ի յերասխն դիմեցին՝ անցանել, եւ սոցա ի վերայ հասեալ՝ զբազումս ի գետն հեղձին¹⁴ եւ զբազումս առ ետեղ սատակեցին: Եւ անտի դարձեալ գան ի Մեղրի, եւ գտանեն անդ զանհամար կառափաթութեաց, եւ զանթիւ ինչս նոցա՝ ձիս, ջորիս, իբր չորս հարիւր տաղանդոյ ինչս: Զբեռն հարկահանին բացին եւ գտին անդ երեսուն եւ երկու հազար

13. Ձեռ. Խան:

14. Ձեռ. գրագում ի գետն հեղձցին:

թուղթս հարկաց: Եւ զԴաւիթայ Նորվէլն սպանին վասն ուրանալոյն զՔրիստոս:

Ապա յետ այսորիկ իբրեւ ժամանակ ինչ էանց, եկն եւ հաս ասպատակիչ Փաշայն, եւ բանակեցաւ ի Բեղ գեղն, մի շաբաթ, եւ զոչ ինչ կարաց առնել: Եւ սոքա ի գիշերի միում հասին ի վերայ նոցա, հարին կոտորեցին եւ զՓաշայն փախստական արարին:

14բ Յետ այսորիկ ութն հարիւր օսմանցի եկին ի Պարկուշատ, առ ի գնալ ի Տաթեւ: Զայն լուեալ սոցա՝ գիշերայն գնացեալ բանակեցան ի լեռն, որ կոչի Օքուզեարաթ, եւ կալան դճանապարհս նոցա, եւ ի յառաւօտուն պահու, իբրեւ հասին անդ, պատահեալ նոցա՝ առին զամենայն ինչս նոցա եւ սպանին ի նոցանէ իբր երեսուն եւ վեց սպառազէն, եւ գեթն այր եւս գերեալ բերին ի Հալիճոր: Ապա միւս | այլ եւս զօր եկն Օսմանցոց, եւ բանակեցաւ ի գեղ մի թուրքաց, մերձ ի Մանլեւ, գնոսա եւս ի գիշերի ի վերայ հասեալ կոտորեցին, եւ միայն զերկուս ի նոցանէ կենդանի բերին ի Հալիճոր:

ԺԲ. Արդ՝ իբրեւ ետես Դաւիթ Պէկն յամենայն ուրեք ըզթշնամիսն իւր առաջի իւր վանեալս, առաքեաց Շահ Թամազին երկուս բեռինս զլիսովք սպանեցելոց: Իսկ նա եւս առաքեաց մի մի նժոյգ ձի, մի խաչալամ եւ իւրաքանչիւր զօրապետացն մի մի վերարկու, եւ զիշխանութիւն հատանելոյ զգրամ: Գրեաց նաեւ զհրովարտակ եւ ասէ. Որքան Խանք գոն ի կողմանսդ յայգետիկ՝ զլիսաւորն լիցի Դաւիթ Պէկն, եւ գնացեալ ի բաց հանցէ զՕսմանցին յերկրէն իւրմէ: Յայնժամ եկեալ կալաւ զՄեղրի, եւ առեալ զօրսն Մեղրու եւ Զաւնդրու՝ գնացեալ բանակեցաւ ի շէնն Կէչիվանու, եւ առաքեաց զօրապետսն ի վերայ Ուրդու ի շէնն Կէչիվանու, եւ առաքեաց զօրապետսն ի վերայ Ուրդու: Եւ սոքա գնացեալ հասին ի վերայ քաղաքին, ի ժամ գիշերոյ, եւ հարին ի նոցանէ իբր երեք հարիւր այր. եւ մնացեալքն փախան եւ գնացին, բանակ առեալ բանակեցան արտաքոյ քաղաքին. եւ սոցա առեալ զաւարն եւ արկին սեղանս՝ զի կերիցեն եւ արբեցեն: Յայնժամ վերահասեալ Դաւիթ ի բարկացաւ ի վերայ նոցա եւ ասէ. Օսմանցին բանակ առեալ բանակի անդէն, եւ դուք նստեալ ուտէք եւ ըմպէք: Եւ նոցա թողեալ զուտեւն՝ դիմեցին ի վերայ Օսմանցոցն: Իսկ նոքա զառաջինն իբրեւ տեսին, գիտացին թէ զօրն Պարսից է եւ յարձակեցան ի վերայ սոցա. եւ իբրեւ զփորձ առին եւ գիտացին թէ այն է զօրն | Դաւիթ Պէկին, փախան եւ եկին սոքա ի Դաշտուն, եւ արք տեղւոյն այնորիկ փախուցեալ անկան Ագուլէս քաղաք Հայոց: Իսկ տէր Աւետիսն եւ Մխիթար սպարապետն

հարեալ եւ փախուցեալ զՕսմանցիին, առին ի նոցանէ զբաղում ջոկս ձիոց եւ ջորեաց: Եւ անտի եկին Մխիթարն եւ տէր Աւետիսն ի յԱզուլէս, իսկ արքն որք պահէին զմեծ գուռն քաղաքին, իբրեւ տեսին զնոսա՝ փախեան. եւ սոցա գնացեալ ի վաճառատեղն քաղաքին՝ դտին զհարկահանն Օսմանցոց փախուցեալ, եւ գնացեալ անտի բանակեցան ի վանս սրբոյն Թովմայի առաքելոյ, եւ անտի տեսին արտաքս ամբոխ շիրթի. եւ ձի կալեալ երկու ոմանք ի նոցանէ եկին արտաքս, եւ դիտացին զի ոմն ի Թուրքաց յափշտակեալ զոմն գերի վարէր, եւ սնդեցան զհետ նորա, եւ նորա Թողեալ զգերեալն՝ փախեալ: Արդ՝ սալալ ինչ կացեալ անդ, տեսին զի Դաւիթ Պէկն եւս եմուտ յԱզուլէս, եւ եկին առ նա. եւ նա իւրաքանչիւրոցն զգեցոյց զմի մի պատմուծան. եւ վերստին դարձան բանակեցան ի սուրբն Թովմաս. իսկ արք քաղաքին եկեալ համբուրեցին ամենեքեան զձեռն Դաւիթ Պէկին՝ ըստ սովորութեան նոցա: Եւ իբրեւ եկն մելիք Մոսին՝ որ տիրէր ի վերայ քաղաքին, եւ յանդիման եղեւ նմա, ասէ Դաւիթ ցարս իւր. Հատէք զգլուխ դորա ի գիշերիս յայսմիկ, զի այր նենգաւոր է դա: Բայց մելիք Փարսաղան արդեւ զայն, եւ ասէ՝ Ոչ է այնպիսի ոք սա: Եւ մնացեալ սոցա ի քաղաքի անդ զաւուրս տասն, եւ յայսմիկ միջոցի Օսմանցիին երիցս դիմեաց ի վերայ Դաւթի, եւ երիցս խորտակեցաւ ի յանյաղթելի քաջ զօրաց սորա: Ապա յետ այսորիկ արքայն Պարսից Շահ Թամաս առաքեաց յօգնութիւն Դաւթի՝ զերիս խանս, եւ վերստին դիմեաց Օսմանցիին եւ խորտակեցաւ ի սոցանէ: Սակայն իշխանքն Ազուլէսի ծածկապէս դաշնադիր էին ընդ Օսմանցոց, եւ սոքա ոչ գիտէին. եւ յետ երկուց աւուրց՝ եկին հասին բաղմութիւն զօրացն Օսմանցոց ի դաշտն Մարաղու, եւ բաժանեցան յերիս առաջս: Իսկ որք ընդ Դաւթի էին, նոքա եւս բաժանեցան յերիս առաջս, խանքն Պարսից ի մի կողմն, տէր Աւետիսն եւ որք ընդ նմա էին՝ ի միւս կողմն, այսինքն՝ ի կողմն Երասխու, եւ մնացեալ զօրքն Հայոց ի մէջ երկուցն: Արդ իբրեւ խմբեցան ի պատերազմ, խանքն Պարսից փախեան յերեսաց Օսմանցոց, բայց զօրքն Հայոց պինդ կացին հարին եւ վանեցին զՕսմանցիին, եւ իբրեւ փախստականս արարին զնոսա, եւ ապա պնդեցան¹⁵ զկնի խանիցն (մինչդեռ փախստեայ երթային նոքա ի Թավրիզ)¹⁶, հասին նոցա եւ դարձուցին զամենայն զօրս նոցա, եւ բերին ի յԱզուլէս. բայց երկու խանքն փախեան: Իսկ սոցա հասեալ կալան զերկուս տիկնայս նոցա, հանդերձ քսան

15. Ձեռ. պնտեցամ:

16. Ձեռ. ունի այդ փակագծերը:

16ա եւ երկու աղախնեօք եւ ծառայիւք նոցա, եւ առաքեցին զնոսա ի Հալիճոր: Արդ՝ յետ այսորիկ իբրեւ երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ազուլէսի եւ Մելիք Մոսին զդաւաճանութիւնս իւրեանց յայտ արարեալ՝ գրոհ տուին ի մէջ քաղաքին եւ արձակել սկսան ի վերայ զօրացն Դաւթի Թօփս: Իսկ նոցա խնայեալ ի նոսա (վասն զի ամենայն քաղաքացիքն էին հայ, եւ ոչ ոք այլազգի դոյր անդ)¹⁷, խուսափեցին ելին արտաքս քան զքաղաքն, եւ մինչդեռ ի ներքս սոքա պաշարեցեալ էին, ասէ Մելիք Փարսաղան ցօրան. Մի՛ ինչ արձակէք հրացանս, զի ահա քաղաքապետն ելանէ արտաքս: Եւ իբրեւ ել քաղաքապետն, այսինքն՝ Մելիք Մոսին արտաքս, սոքա հարեալ սպանին զնա Թօփով: Եւ անտի չուեցին գնացին ի գիւղ մի Թուրքաց, ուր էին հազար երեք հարիւր ոչխար սպանդանոցի Ազուլեցոց. զամենեսին զնոսին ածին ի Մեղրի: Եւ յետ երկուց աւուրց՝ զօրականքն Դաւթի վերստին եկին յԱզուլէս, եւ հարին որ ինչ էր արտաքոյ-քաղաքին, եւ գնացին ի Մեղրի, եւ անտի անցին դրանցին ի Հալիճոր, եւ բանակեցան անդ:

Արդ՝ իբրեւ եկին ի Հալիճոր, առաքեաց Դաւիթ Պէկն զտէր Աւետիսն առ զօրականսն, որք էին ի Չաւնդուր. իսկ նոքա մերժեցին զԴաւիթ եւ ոչ լուան նմա: Եւ նորա եկեալ ծանոյց Դաւթի զապստամբիւն նոցա ի նմանէ, եւ թէ որպէս կացուցեալք են ի վերայ ինքեանց զկառավարս Օսմանցոց: Յայնժամ հրամայեաց Դաւիթ չորեքտասան զօրազլխացն իւրոց երթալ կալնուլ եւ կապեալս ածել զնոսա առ ինքն: Եւ ելին կազմեցան պատրաստեցան, ձի հեծան եւ գնացեալ հարին եւ կալան զգորականս եւ զՕսմանցի ոստիկան կառավարն նոցա, եւ ածին ի Հալիճոր առ Դաւիթ. եւ նոքա մատուցեալ առաջի նորա՝ երդմնի եղեն նմա թէ այսմհետէ քեզ հնազանդիմք յաւիտեան: Եւ նորա հաւատացեալ նոցա՝ զերկու զօրականս առ ինքն եթող, եւ զայսն ետ ի ձեռս տէր Աւետին, զի ի ներքոյ իշխանութեան նորա լինիցին: Եւ նորա առեալ տարաւ զնոսա ի Չաւնդուրն եւ արձակեաց զնոսա ի տունս իւրեանց:

16բ Եւ յետ այսորիկ իբրեւ չորք աւուրք ի վերայ անցին, ելին Բաթալի խանն, եւ զօրքն Օսմանցոց, եւ հարին զերիս գիւղս Հայոց ի գիշերի, եւ կալեալ զերիս զօրապետս՝ ածին ի Պարկուշատ. եւ յետ երկուց աւուրց, իբրեւ լուաւ տէր Աւետիսն՝ ժողովեաց զցօրսն իւր, եւ գնացեալ ի գիշերի եհար զնոսա, եւ կալաւ զերկու Թուրք զօրականսն, եւ զամենայն ինչս նոցա էած ի Չաւնդուր:

17. Ձեռ. ունի այդ փակագծերը:

ԺԳ.— Եւ ի ժամանակի յայսմիկ մեռաւ Դաւիթ Պէկն խաղաղութեամբ ի տան իւրում, յամի Տեառն 17(28) եւ ի Թուին Հայոց ՌՃ(Հէ)¹⁸ ի յամսեանն . . . :

ԺԴ.— Արդ՝ իբրեւ վախճանեցաւ Դաւիթ Պէկն, զօրականքն ամենեքեան միաբանեալք կացուցին ի վերայ ինքեանց իշխան զՄխիթար զօրադուխն: Բայց զկնի միոյ տարւոյ, վասն զի զօրականք միմիանցն ոչ հպատակեցան, ուստի Օսմանցին եկեալ էառ զբերդն Դաւթի, եւ զերի վարեցին զամենայն բնակիչսն նորա. իսկ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ՝ զնաց վերստին զօրս գումարեալ ի Հայոց եւ Թուրքաց, վերստին խորտակեաց զՕսմանցին, եւ դարձոյց յետս զքաղաքսն եւ զամուրս ի նոցանէ: Էառ եւ զՈւրդուար քաղաքն եւ կոտորեաց զամենայն որ ինչ էր ի նմա, եւ էառ զաւար բազում յոյժ, եւ զհարիւր վաթսուն բեռինս ուղտուց: Եւ ինքն դարձ արարեալ անտի, եկեալ ժամանակ ինչ բնակեցաւ ի յամուրն Խնձորէկս. եւ անդ իւրոց զօրացն հարեալ Թուրք սպանին, եւ վաղվաղակի Հայոցն հատեալ ըզգլուխ նորա՝ տարին առ Փաշայն Թաւրիզու. եւ նա ըստ արժանեացն հատոյց նոցա, հատանելով զգլուխ անդամացն, եւ ասէ. «Զիարդ իշխեցիք զայդպիսի քաջ այր սպանանել ի զուր տարապարտուց: Եւ տէր Աւետիսն յայնմիկ ժամանակի փախուցեալ գալ ի Գաղատիա(յ), եւ անտի դիմէ առ Սրբազան Հայրապետն Հռոմայ եւ առնու զներումն»¹⁹:

18ա Այսոքիկ էին զօրավարք եւ զօրապետքն Դաւիթ Պէկին, մինչ էրն ի Շահեր. Մխիթարն, մեծ Կորկին, վրացի Յօհաննէսն, Բանդուր Զաքարիա իշխանն, փոքր Կորկին, Աւդանտել իշխանն Պայինտուր իշխանն վրացի (արդ սոքա վրացի ասին, ըստ որում էին յերկրէն վրաց, այլ ոչ եթէ էին ի վրաց ազգէն, վասն զի Դաւիթ եւ ամենայն զօրավարք եւ զօրքն իւր էին ի յազգէ Հայոց). դարձեալ Ծատուրն, Ղարակեօզն, Թաթէոսն, Եղիազարն, Յարութիւնն եւ այլն. այսքան զօրօք. . . :

18. Զեռազրին մէջ այս երկու թուականները կիսատ մնացած են, այսպէս 17... ՌՃ... բայց յետոյ մէկը մատիտով լրացուցած է, դարձնելով 1728 եւ ՌՃՀէ, անշուշտ հետեւելով Գուլամիթեանցի հրատարակութեան (տես Աճ, էջ 68):

19. Զեռազրին մէջ կան սրբադրութիւններ այս վերջին նախադասութեան մէջ, զոր կրկին կը դնենք հոս, ընդգծելով այն բառերը՝ որոնք մեկանով եղծուած են, վրան գիծ քաշելով. «Եւ տէր Աւետիսն յայնմիկ ժամանակի փախուցեալ ժամանակ ինչ բնակեցաւ գալ ի Գաղատիա, եւ անտի եկեալ ի վեմետիկ դիմէ առ Սրբազան Հայրապետն Հռոմայ եւ առնու զներումն»:

Որք ի Շահեր բնակէին քաջ զօրավարքն Դաւթի, էին այսոքիկ. Պուան զօրապետն, Պակի զօրապետն, Մինասն, Ստեփաննոսն, եւ ընդ նոսա 550 զօր:

Որք ի Տաթեւ՝ էին այսոքիկ. Ղիշին, Այտին, Եսային, Տիրացուն, Սիմէոնն, Ապկարն, եւ ընդ նոսա 400 զօր:

Որք ի Զաւնդուր գաւառին՝ էին այսոքիկ. Թորոսն, Վարդանն, Մարսաթան, Նուպարն, Թովմասն, Թուրինջն, Յօհաննէսն, եւ ընդ նոսա 2000 զօր:

Եւ ի Կալեր էր Պապ զօրադուխն, եւ ընդ նմա 700 զօր: Իսկ Ստեփաննոս Վարդանէսեան, որ ի տանէն Շահումեան, էր սպարապետ եւ տեղակալն Պապայ, եւ էր սիրելի յաջս Դաւթի, վասն իւրոյ քաջութեան եւ ազնուականութեանն. ուստի ետ նմա յետոյ նաեւ զիշխանութիւն եւ զկալուածս երկից Մելիքաց:

Եւ ի Մեղրի էին այսոքիկ զօրավարք. այսինքն՝ Կոստանդին, Յօհաննէսն, Սարին, Առաքելն, եւ ընդ նոսա 400 զօր: Սոքա զդէմ կալան ութուտասան հազար զօրացն ի յամուր աւանն Մեղրեայ, եւ ի զիշերի միում սակաւուք ի վերայ յարձակեցան ութուտասան հազարացն, եւ ետուն նոցա զմեծամեծ հարուածս:

18բ Յետ այսորիկ որդիքն Մաղաշուղին եւ Տիւնչի մականուանելոյն էին, չորեք հարիւր արամբք:

Զօրավարն Սիսանայ՝ հինգ հարիւրով:

Մէլիք Ղուչուն՝ երկու հարիւրով:

Աւշար երէցն, որ եւ կոչի տէր Գասպար, երկերիւր յիսնաւ:

Ատոմ զօրավարն Պաղարբերդու՝ հարիւր յիսնաւ:

Ղաղար զօրավարն Կուլարերդին՝ հարիւր տասամբք:

Սարգիս զօրավարն Շիւանու ձորոյն երկերիւր յիսնաւ:

Մելիք Փարսաղան ի Հալիձոր երկրին՝ երկերիւր յիսնաւ:

Եւ տէր Աւետիսն ի նոյն Հալիձոր՝ չորեք հարիւր վաթսուն եւ ութն արամբք:

Այս տէր Աւետիս արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս եւ ի սպառնութեանս իսկ տեսանի. զի էր կարի քաջ եւ արիւնասիրտ եւ զօրաւոր յոյժ բանիւք եւ զործովք. եւ վասն այսորիկ նա յորմէ հետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտեցաւ ի Գաղատիայ, բազումք յորդորէին զնա ի հայրենի նորին գաւառէ՝ անդրէն դառնալ առ նոսա, եւ սալապանել զերկիրն զայն. բայց նա հրաժարէր յաղազս պատուոյ իւրոյ քահանայական կարգին, որպէս եւ ոմն յարգելի երկցանց անտի զրեաց առ նա զայս ոտանաւոր առ նոյն յորդոր:

Ի նուազիւ Հայոց ազգի,
 Ի դառն եւ նեղ ժամանակի,
 Յաղթող զօրեղ երեւեցար,
 Քաջ զինաւոր տէր Աւետիս:
 Սարսին ի քէն ազգն Տաճկաց,
 Ձի յաղթեցեր նոցին զօրաց.
 Ջարքայական զէնն Քրիստոս,
 Տէր Աւետիս, քեզ պարգեւեաց:
 Արիական զօրօք քոյին,
 Յաղթեցեր չար Գրիգորին,
 Ձի ուրացաւ ըզՔրիստոս,
 Դու կտրեցեր զլուխ նորին:
 Հասեր արագ բերդն Մեղրին,
 Սատակեցեր ըզՍարաճին.
 Երեսն հազար թուղթ խարաճին
 Այրեցեր ի մէջ կրակին:
 Ազնիւ զօրօք քաջ եւ ընտիր,
 Ազուլեաց դաշտն ճէպէիր.
 Անարգողաց սրբոյ խաչին,
 Տէր Աւետիս վրէժխնդիր:
 Կրկին խնդրեմք արիանալ,
 Պալի Պէկին զինուորանալ.
 Հայոց ազգին թեւ եւ թիկունք,
 Տէր Աւետիս, բարեաւ երթաս:
 Էրէցս ապիկար անարժան,
 Խնդրեմք սրբոցն համանդամայն.
 Խաչեալ Աստուած, Տէր իմ Յիսուս,
 Տէր Աւետիս քեզ պահապան²⁰:

Հրտ. Հ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐԱՄԵԱՆ

20. Սոյն քերթուածը հրատարակած է Հ. Եղիա Վրդ. Փէլիկեան (տե՛ս Բագմալեպ (ՂԶ) 1938, Թ. 6-9, էջ 187):

Ս. ՂԱԶԱՐՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

ՀՐԴԵՀԷՆ ՅԵՏՈՅ*

(Գրեց՝ ԱԼՊԵՐԹՈՅ ՐԻՑՑԻ)

Տարիէ մը աւելի անցաւ արդէն Ս. Ղազարի՝ հրդեհին վրայ, ու տակաւին ինծի հնարաւոր չեղաւ իրականացնել ծրագիրս՝ պատմա-դեղագիտական լրիւ ուսումնասիրութիւն մը նուիրելու այս կղզեա-կին. ու թերացումիս զլիաւոր պատճառն է իմ կամաւոր փոխադրումս դէպի երկրաշարժէն աղէտեալ Ֆրիուլի: Ուստի, պիտի գոհանամ հրատարակել հոս լուկ հակիրճ տեղեկութիւններ Ս. Ղազարի մասին,

* Այս յօդուածը, այժմ վերամշակուած, իտալերէն լեզուով նախապէս լոյս տեսած է Atti dell'Istituto Veneto di Scienze, Lettere ed Arti հանդէսին մէջ, Վենետիկ, հտր. ՃԼԵ (1976-77), էջ 323-337, Rapporto da S. Lazzaro degli Armeni խորագրով, առանց նկարներու:

1. Ս. Ղազարու մասին տե՛ս 1^o ԶԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (Ս. Ղազարի դիւանէն). ժամանակագրութիւն Միխայիլ Միքայիլովի (մեծ տարեգրութիւն): Պատմական հակիրճ տուեալներ Ս. Ղազարի մասին (փոքր տարեգրութիւն): Հ. Ղ. մական հակիրճ տուեալներ Ս. Ղազար: E. UTUDJIAN, Aménagement de l'île Saint-Lazare, ԱԼԻՇԱՆ, Ս. Ղազար: M. GAY, Per la sistemazione e l'ampliamento dell'Abbazia Mechitarista di S. Lazzaro, Վենետիկ 1943: 2^o ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: V. CORONELLI, Isolario ovvero Atlante veneto, Վենետիկ 1696-97: G. RENIER MICHEL, S. Lazzaro in AA. VV., Le isole della laguna di Venezia, Վենետիկ 1828: G. CAPPELLETTI, Storia dell'Isola di S. Lazzaro e della Congregazione de' monaci Armeni, Վենետիկ 1877: G. ISSAVERDENZ, L'Isola di S. Lazzaro e il Monastero Armeno, Վենետիկ 1879: Հ. Ս. ԵՓՐԻԿԵԱՆ, Ս. Ղազար (հրատարակէպ) 1901, էջ 162-215: P. MOLMENTI - D. MANTOVANI, Le isole della laguna veneta, Պերկամոյ 1904: P. M. NURIKHAN, Il servo di Dio Abate Mechitar fondatore dei PP. Mechitaristi (Padri Armeni Benedettini) di Venezia, di Vienna, Հոռոմ - Վենետիկ 1914 (տե՛ս յատկապէս էջ 345-357): Հ. Ղ. ՏԱԵՆԱՆ, Ս. Ղազարու նորոգման քանդակարարական 200ամեակը (հրատարակէպ) 1926, էջ 140-145): Հ. Գ. ԹՈՐՈՍԵԱՆ, Վարք Միխայիլ Արքայի, Վենետիկ 1932: T. NEDIANI, I grandi rifugi dello spirito. L'Isola di S.